**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**

**«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

15.09 2021թ.
ժամը 14:45

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահող (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան,

**գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Առաքելյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Բ. Գազարյան,

**Բացող՝**

- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի ավագ սպա, կապիտան Ա. Գևորգյան,

**Բացակայում էին՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հովհաննիսյան:

**«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1. | «Կար Պետրոլ» ՍՊԸ |
| 2. | «Մաքս Օիլ» ՍՊԸ |
| 3. | «Մոսէսքո» ՍՊԸ |
| 4. | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**2. «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Ի գիտություն «Մոսէսքո» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակի հետ միասին ներկայացրել է նաև հայտի ապահովման վերջնաժամկետի փոփոխություն:

Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

«Մոսէսքո» ՍՊԸ-ի, որի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 2-րդ չափաբաժնով Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում ներկայացվել է **այլ ՏՊ-ով** տեխնիկական բնութագիր ունեցող ապրանք, մասնավորապես.

*«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «ՍՏՕ 84035624-081-2012 Միջազգ. ստանդ. SAE-15W40 API-SL/CI-4 կամ համարժեք» տեղեկատվությունը, իսկ մասնակիցը ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018 SAE-15W40 API-SL/CI-4» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):*

*«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՕՍՏ, ՍՏՕ և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի անհրաժեշտ էր ներկայացնել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշներից չտարբերվող տեղեկատվություն (բացառելով, կամ համարժեք բառերը), կամ անհրաժեշտ էր ներկայացնել առաջարկվող ստանդարտի (ՏՊ) կրկնօրինակը:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 15.09.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 17.09.2021թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով որ սույն արձանագրության 2.3 կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է՝ ներկայացրել է «ՏՊ 19.20.29-001-13488701-2018 SAE-15W40 API-SL/CI-4» ստանդարտի կրկնօրինակը, որը գնահատվել է համապատասխան ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերին, որոշեց մասնակիցների հայտը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

***Բացակայել է*** - ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

3.1 Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Գնման առարկայի | | | | | | Մասնակիցների | | | | Ընտրված մասնակցի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանում | չ/մ | քանակ | Միավորի գին | Նախահաշվա-յին գումար | անվանումները | Առաջարկած գինը | | | անվանումը |
| | | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր | |
| 1 | ավիացիոն կերոսին /Ավիավառելանյութ/ | տ | 2,650.00 | 560,000.00 | 1,484,000,000.00 | «Մաքս Օիլ» ՍՊԸ | 1,136,850,000.00 | 227,370,000.00 | 1,364,220,000.00 | «Մաքս Օիլ» ՍՊԸ |
| | | | | | | «Կար Պետրոլ» ՍՊԸ | 1,187,597,500.00 | 237,519,500.00 | 1,425,117,000.00 | |
| 2 | շարժիչի յուղեր /15W40/ | կգ | 124,337.00 | 1,925.00 | 239,348,725.00 | «Մոսէսքո» ՍՊԸ | 184,267,434.00 | 36,853,486.8 | 221,120,920.8 | «Մոսէսքո» ՍՊԸ |
| | | | | | | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 194,691,019 | 38,938,204 | 233,629,223 | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են հրավերի պայմաններին (ճիշտ են):

***Բացակայել է*** - ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

4.1 17.09.2021թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել.

- «Մաքս Օիլ» ՍՊԸ ՝ 1-ին չափաբաժնի մասով,
- «Մոսէսքո» ՍՊԸ ՝ 2-րդ չափաբաժնի մասով,

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

***Բացակայել է*** - ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.**

(Ա. Հովհաննիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-7/2 » ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

***Բացակայել է*** - ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ա. Հովհաննիսյան)

*6.1 «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ կողմից «Մոսէսքո» ՍՊԸ ներկայացված հայտի՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ կատարվել է հարցում 13.09.2021թ.-ին, որով խնդրել է «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ին տրամադրել «Մոսէսքո» ՍՊԸ կողմից ներկայացված «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտի կրկնօրինակը և ապրանքի համապատասխանության սերտիֆիկատը:*

*Քանի որ ընթացակարգի հրավերով 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկայի արտադրող գործարանի կողմից տրվող համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը պահանջվել է ապրանքի ընդունումն իրականացնելու փուլում, , ուստի դրա մասով հնարավոր չէ տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, իսկ «ՏՊ 19.20.29-001-13488701-2018» ստանդարտի կրկնօրինակը (պատճենը), կտրամադրվի «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ-ին 17.09.2021թ.-ին:*

***Բացակայել է*** - ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

| | |
|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝** | Ա. Ասատրյան |
| **Գնահատող՝** | Գ. Ուստյան |
| **Գնահատող՝** | Ա. Առաքելյան |
| **Գնահատող՝** | Բ. Գազարյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Հովհաննիսյան |